ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

03 ՀՈՒՆԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 115-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱԳԻԿ ԱՂՎԱՆՅԱՆԻ, ԳՈՀԱՐ ԱՂՎԱՆՅԱՆԻ, ԳԱՅԱՆԵ ԱՂՎԱՆՅԱՆԻ ԵՎ ԱԼՎԱՐԴ ԱՂՎԱՆՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առաջին և երրորդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ և 42-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ հոդվածների, 59-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ, 189-րդ, 198-րդ և 202-րդ հոդվածների, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացի Գ. Աղվանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991թ. մայիսի 15-ի թիվ 1 որոշումը, հողամասի հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը.

1. Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0062-0016 կադաստրային ծածկագրով, Օձուն համայնքի փողոց 4, նրբանսք 2, թիվ 6 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.09169 հեկտար մակերեսով բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի, հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինական կառուցված (կառուցվել է 1968 թվականին) 129.5 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով վերականգնել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձանց՝ Գագիկ Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 06.02.1968թ., Գոհար Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 12.08.1969թ., Գայանե Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 31.08.1970թ. և Ալվարդ Սեյրանի Աղվանյանի՝ ծնված 26.02.1974թ., հողհատկացման հիմքը և ճանաչել նրանց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

Վերոնշյալ անշարժ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պայմանները, ինչպես նաև կառուցված չեն և չեն

գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Սույն որոշմամբ սահմանված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրը:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2022թ., հունիսի 3
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք,գ. Օձուն